— Ես այդ երբեք չէի սպասում Հաջի-Իսաղից, — ասաց նա:

— Սպասելի էր... — պատասխանեց բաղեշցին: — Նա բոլորովին փոխոել էր... վերջին աղէտաւոր կռիւների ու երկպառակութիւնների ժամանակ նա էր գլխաւոր բողոքօղներից մինը, որ Ամերիկայի միսիոնարներին արտաքսեցին Բաղէշից: Խեղճ ծերունին միշտ ասում էր. «Այդ անպիտանները, բաւական չէր, որ մեզ հեռացրին մեր լուսաւորիչ պապից, այլեւ մեզ մեր նախապապի՝ Հայկի, հետ էլ խորթացրին... մեզ մեր հարազատ եղբայրների հետ թշնամացրին»...

Պատի ժամացոյցը զարկեց երկուսը:

Խանութատէրը վեր կացաւ եւ, հրաւիրելով իր խօսակցին, ասաց.

— Յոյս ունիմ, որ դուք այնքան բարի կլինիք, որ ճաշը այսօր մեզ մօտ անուշ կանէք:

— Մեծ ուրախութեամբ, — պատասխանեց նա, նոյնպէս կանգնելով: — Ես ձեր կնոջը եւ երեխաներին վաղուց չեմ տեսել, կը ցանկանայի նրանց տեսնել:

Նրանք դուրս եկան խանութից:

Անցան բաւական ուղիղ, մաքուր փողոցներով: Աջ եւ ձախ բարձրանում էին երկյարկանի, երեքյարկանի քարաշէն տներ: Այլեւս ոչ վաղեմի նեղ, կեղտոտ փողոցները կային, եւ ոչ հում աղիւսից կամ կաւից շինուած, կիստոէր խրճիթները: Ամէն ինչ գեղեցիկ էր, ամէն ինչ մաքուր էր: Մաքրոել էր եւ օդը: Փողոցներում մարդիկ ցնցոտիներով չէին թափառում եւ անցորդի օձիքը բռնելով նրանից ողորմութիւն չէին պահանջում: Կանայք չադրաների մէջ փաթաթուած, երեսները ծածկուած վախենալով չէին ման գալիս, փողոցային անամօթ սրիկաների յարձակմանը չենթարկոելու համար: «գաւուր» բառը այլեւս չէր լսւում: Մահմեդականները քրիստոնեաներին հանդիպելիս մի քանի քայլ հեռոից ողջունում էին: Փաշայի պալատի մէջ նստած էր մի քրիստոնեայ նահանգապետ: Օրոայ այն ժամն էր, երբ դպրոցում արձակում են աշակերտներին: Տղայ եւ աղջիկ, գրքերի պայուսակները մէջքներին կապած, կամ թեւքերի տակն առած, լցրել էին փողոցները: Անցնելու տեղ չկար: Դրանց փոխարէն, այդ փողոցներում, մի ժամանակ վխտում էին հարբած ենիչերիները, մերկ սրերը ձեռքներին, կամ խլրտում էին գազանաբարոյ «ասքարը»՝ յափշտակելով ամէն պատահած բան: Քաղաքացիք, նրանց տեսնելով, օր ցերեկով մտնում էին իրանց տները եւ դռները պինդ փակում էին: Այժմ ո՛չ այդ բարբարոսները կային եւ ո՛չ վաղեմի երկիւղը կար: